ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N 235

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ

(ծածկագիրը՝ 1.3-9)

Վարչության պետի տեղակալը՝

ա) վարչության պետի հանձնարարությամբ կազմակերպում է Երևանի զարգացման միամյա, քառամյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրերի նախագծերի, ինչպես նաև հաստատված ծրագրերում առաջարկվող փոփոխությունների մշակման աշխատանքները.

բ) վարչության պետի հանձնարարությամբ կազմակերպում է վարչության ընթացիկ գործունեությունը և իր լիազորությունների շրջանակում օժանդակում է վարչության պետին վարչության աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման գործառույթներն իրականացնելիս.

գ) վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստումը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակումը.

դ) մասնակցում է Երևանի քաղաքապետարանի և օտարերկրյա կազմակերպությունների համատեղ ծրագրերի իրականացման աշխատանքներին, այդ թվում՝ դրամաշնորհային.

ե) մասնակցում է միջազգային ներդրումային և այլ հաստատությունների կողմից ֆինանսավորվող նախագծերի մշակմանը, համաձայնեցմանը և իրագործման վերահսկմանը.

զ) վարչության պետի հանձնարարությամբ կազմակերպում է արտասահմանյան կազմակերպությունների կողմից տրամադրվող տեխնիկական և այլ աջակցության ծրագրերը.

է) վարչության պետի հանձնարարությամբ կազմակերպում է միջազգային առաջատար փորձի, այդ թվում նաև գործընկեր քաղաքների հաջողված նախագծերի ուսումնասիրությունը՝ առաջարկներ ներկայացնելով քաղաքային տնտեսության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերում և նախագծերում դրանց կիրառման նպատակահարմարության վերաբերյալ,

ը) կազմակերպում է Երևանի տնտեսության և ներդրումային կարիքների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակման և հրապարակման աշխատանքները, արտասահմանյան և հայաստանյան գործարար հատվածների իրազեկումը՝ նպաստելով ներդրումային գրավչության բարձրացմանը.

թ) վարչության պետին է ներկայացնում աշխատակիցների աշխատանքային ծրագրերը.

ժ) վարչության պետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր

կազմավորելու համար: Վարչության պետի տեղակալն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

Վարչության պետի տեղակալը՝

ա) ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական կառավարման ոլորտի կամ համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավար պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

բ) ունի «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե) տիրապետում է ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2021 թվականի հունիսի 9-ը, ժամը 10:00:
Դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010515133):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: